657
4-77

24 SEP 201

ԽՍՀՄ—ԺՖԿ

ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱ-
ՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ի լրումն ԽՍՀՄ ԺՖԿ-ի 1936 թվի օգոստոսի 5 ի № 569 որոշմանը (քաղաքային) ֆինբաժինների յեվ խնայողական դրամարկղների համար առաջներում բաց թողնված պետական ներքին փոխառությունների պարտատոմսերը յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով փոխանակելու կարգի մասին—փոխանակման կապակցությամբ—հրահանգի.

# ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋ (ՔԱՂ) ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԽՍՀ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

24.902
932 AS
28 AUG 2011

Տեխն. ձևավոր. և Սրբագրիչ Ա. Հախվերդյան

4 657 / Կ-77
ՀՍԽՀ-СОР
3523 / 32

Գյուղհրատի տպարան | Ռեկլամ-Հրատ Բյուրո
Գլավլիտի լիազոր—1112 | Պատվեր № 622—152 | Տիրաժ 900

# ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋ(ՔԱՂ) ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Շրջ(քաղ) խնայդրամարկղների հաշվապահությունը պարտավոր է ղեկավարվել վերոհիշյալ հրահանգով, վորով սահմանված են նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ գործարքների ձևակերպման կարգը և այդ գործարքների փաստաթղթերի ձևերը։

Մասնավորապես բալանսային և արտաբալանսային հաշիվների փոխանակման գործարքների վերաբերյալ, շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը պիտի ղեկավարվի հետևյալով՝

1. Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերը, շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը հաշվի յե առնում № 205 արտաբալանսային հաշվում ձև № 106 քարտի վրա—ըստ փոխառության յուրաքանչյուր առանձին մասերի։

Նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխարեն, այդ փոխառության փոխանակման համար տված պարտատոմսերը, վորոնք փոխանակվել են անմիջականորեն խնայդրամարկղում—անց են կացվում ձև № 106 քարտի «տված է փոխանակության համար» սյունյակով։ Մինչև 1936 թվի համար ձև № 106 նոր քարտերի պատրաստումը, շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը պիտի օգտվի № 17 սյունյակից, փոխելով այդ սյունյակի անվանումը—դարձնելով «տված է փոխանակման համար»։

Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերը, վորոնք տրվում են բաժնեգիրներին նախորդ փոխառությունների առաջներում դիմապրկված ձևով ըն-

դունված պարտատոմսերի փոխարեն, անց են կացվում ձև № 106 քարտի № 19 «այլ ծախսեր» սյունյակով։

Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) հիմնարկ-ձեռնարկություններին տրված պարտատոմսերը դուրս են գրվում ձև № 106 քարտի 16-րդ սյունյակով, վորպես ծախս, իսկ շրջ(քաղ) խնայդրամարկղի լիազորներին տրված պարտատոմսերը—նույն քարտի 15 րդ սյունյակով։

Դրան համապատասխան, հիմնարկ-ձեռնարկություններից վերադարձվող այդ փոխառության մնացած պարտատոմսերը—անց են կացվում վորպես մուտք ձև № 106 քարտի 8-րդ սյունյակում, իսկ շրջ(քաղ) խնայդրամարկղի լիազորի կողմից վերադարձված պարտատոմսերը—7-րդ սյունյակում։

2. Նախորդ փոխառությունների պարտատոմսերը—յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով փոխանակելիս կատարվող գործարքները հաշվի առնելու համար, շրջ(քաղ) խնայդրամարկղի արտաբալանսային հաշիվների անվանացուցակի մեջ մտցվում են հետևյալ փոփոխությունները.

ա) Հիմնարկ-ձեռնարկությունների և շրջ(քաղ) խնայդրամարկղների փոխանակումը գյուղում կատարող լիազորների հետ հաշվարկումներ կատարելու համար—նրանց, վորպես առհաշիվ տված յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերի վերաբերյալ, բացել նոր արտաբալանսային հաշիվ № 208 «առհաշիվ տված փոխառության պարտատոմսեր» վերնագրով, բաժանելով այդպիսին յերկու յենթահաշիվների.

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ № 1—հիմնարկ-ձեռնարկությունների համար.

ՅԵՆԹԱՀԱՇԻՎ № 2—շրջ(քաղ) խնայդրամարկղի լիազորների համար.

(տես յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) հաշվառման և հաշվետվության մասին հրահանգի 30 րդ հոդվածը).

№ 1 յենթահաշվի մուտքով պիտի անցնեն այն պարտատոմսերն իրենց անվանական արժեքով, վորոնք տրվում են, առհաշիվ հիմնարկ-ձեռնարկություններին—բաժնեգիրների հետ հաշվարկումներ տեսնելու և առհաշիվ՝ փոխանակման համար.



Այդ յենթահաշվից, վորպես ծախս պիտի դուրս գրել նախորդ փոխառությունների փոխանակումից խնայդրամարկղը հանձնված պարտատոմսերն իրենց անվանական արժեքով, ինչպես և յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) հիմնարկ ձեռնարկությունների կողմից վերադարձվող պարտատոմսերն իրենց անվանական արժեքով, վորոնք չեն վճարվել բաժնեգիրների կողմից։

Շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը պարտավոր է № 1 յենթահաշվին կից տանել յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության համար հատուկ անձնական հաշիվ ձև № 107-ա, վերոհիշյալ հրահանգի 30-րդ հոդվածով սահմանված կարգով։

№ 2 յենթահաշվի մուտքով պիտի անցկացվեն յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) այն պարտատոմսերը, վորոնք տրվում են առհաշիվ շրջ(քաղ) խնայդրամարկղի լիազորներին փոխանակումը գյուղում կատարելու համար։ Վորպես ծախս, այդ յենթահաշվից պիտի դուրս գրել լիազորի կողմից շրջ(քաղ) խնայդրամարկղը հանձնված նախորդ փոխառությունների փոխանակված պարտատոմսերն իրենց անվանական արժեքով, ինչպես և նրանց կողմից վերադարձված նոր փոխառության փոխանակման համար չօգտագործված պարտատոմսերն իրենց անվանական արժեքով։

Շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը № 2 յենթահաշվին կից պարտավոր է տանել յուրաքանչյուր լիազորի համար անձնական հաշիվ ձև № 107-բ (տես № 1 հավելվածը)։ Փոխանակումը վերջացնելուց հետո, շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը յուրաքանչյուր լիազորի հետ պիտի կատարի վերջնական հաշվարկում և ձև № 107-բ անձնական հաշիվը պիտի փակի։

Հետևապես բոլոր լիազորների հետ հաշվարկումները փակելիս, № 2 յենթահաշիվը փակվում է։

բ) Նախորդ փոխառությունների փոխանակված պարտատոմսերը 1936 թվի սեպտեմբերի 1-ից հաշվի առնելու համար, շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը պիտի բացի նոր արտաբալանսային հաշիվ № 224 «փոխանակումից ընդունված նախորդ փոխառությունների պարտատոմսեր» անվան տակ, բաժանելով յերեք յենթահաշիվների։

Ցենթահաշիվ № 1—շրջ(քաղ) խնայդրամարկղներում.

Ցենթահաշիվ № 2—յենթադրամարկղներում.

Ցենթահաշիվ ձև № 3—ճանապարհին։

№ 1 յենթահաշվի մուտքում պիտի անցկացվեն անվանական արժեքով.

ա) Շրջ(քաղ) խնայդրամարկղի (գործառնական մասի) կողմից փոխանակված նախորդ փոխառությունների պարտատոմսերը.

բ) հիմնարկ-ձեռնարկություններից և լիազորներից շրջ(քաղ) խնայդրամարկղն ընդունված պարտատոմսերը և

գ. առաջին կարգի բաժանմունքներից ստացված փոխանակված պարտատոմսերը։

Յեթե շրջխնայդրամարկղն ունի առանձին նկուղ, ապա № 1 յենթահաշվով պիտի հաշվի առնվեն միմիայն նկուղն ընդունված փոխանակված պարտատոմսերը։

№ 1 յենթահաշվի ծախսով պիտի անցկացվեն անվանական արժեքով այն փոխանակված պարտատոմսերը, վորոնք ուղարկվում են «վիճակահանված արժեքների ստուգման և վոչնչացման հանձնաժողովին»։ Շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը № 224 հաշվի, № 1 յենթահաշվի համար պիտի տանի հատուկ մատյան ձև № 165 (տես № 2 հավելվածը) այդ պարտատոմսերի անվանական արժեքը № 1 յենթահաշվից, վորպես ծախս դուրս գրելու հետ միասին, հաշվապահության կողմից պիտի մուտք գրվի № 214 «վոչնչացման համար ուղարկված վիճակահանված արժեքներ» հաշիվը։

Պարտատոմսերի արժեքը № 214 հաշվից դուրս է գրվում վորպես ծախս, ընդհանուր սահմանված կարգով, այդպիսիք վոչընչացնելու մասին արձանագրությունն ստանալուց հետո։

№ 2 յենթահաշվի մուտքում պիտի անցկացվեն բաժանմունքների կողմից փոխանակված պարտատոմսերի անվանական արժեքը, իսկ ծախսով նույն պարտատոմսերի անվանական արժեքը, վորոնք ուղարկվում են շրջ(քաղ) խնայդրամարկղին։

Բաժանմունքներից ստացված ամենօրյա հաշվետվությունների հիման վրա, ուղարկված փոխանակված պարտատոմսերի անվանական արժեքը № 2 յենթահաշվից վորպես ծախս դուրս գրելու հետ միաժամանակ, նախքան այդ պարտատոմսերը շրջ(քաղ) խնայդրամարկղի գործառնական մասը մուտք լինելը, պարտատոմսերի նույն այդ գումարը պիտի մուտք անել № 3 յենթահաշվում։



Շրջ (քաղ) խնայդրամարկղն առաջին կարգի բաժանմունքի կողմից ուղարկված պարտատոմսերն ստանալիս, այդ պարտատոմսերի արժեքը պիտի դուրս գրի, վորպես ծախս № 3 յենթահաշվից և միաժամանակ մուտք անի № 1 յենթահաշիվը։ № 3 յենթահաշվի համար հաշվապահությունը պիտի տանի ձև № 108 մատյանը։

3. Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերը, վորոնք հանձնվել են վորպես ի պահ և թողնվել են, ի ապահովումն փոխատվությունների սակայն վորոնց ժամկետը դեռևս չի անցել, այդ պարտատոմսերը հաշվառման յենթարկելու համար, 1936 թվի սեպտեմբերի 1-ից շրջ (քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը պիտի բացի նոր արտաբալանսային հաշիվ № 216 «Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) ի պահ և գրավ վերցրած պարտատոմսեր» անվան տակ։

Ի պահ և գրավ վերցրած պարտատոմսերի փոխանակման դեպքում, շրջ (քաղ) խնայդրամարկղների հաշվապահությունն անում է հետևյալ գրանցումները.

ա) Փոխատվությունը կանխիկ դրամով մարելու դեպքում, պահանջագրում է փոխատվության գումարը № 34 հաշիվը, և տոկոսներն ու պահպանման վճարը № 126 հաշիվը, պարտագրելով մուծված ամբողջ գումարը № 54 հաշիվը։

բ) Ի պահ և փոխատվությունների դիմաց գրավ վերցված նախորդ փոխառությունների փոխանակված պարտատոմսերը դուրս է գրում վորպես ծախս № 218 հաշվից և մուտք է գրում № 224 հաշիվը։

գ) Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) նոր ի պահ վերցրած պարտատոմսերը մուտք է գրում № 216 հաշիվը։

դ) Փոխատվությունն ի հաշիվ գրավ դրված պարտատոմսերի յեկամուտների մարելու դեպքում, պարտագրվում է № 24 հաշիվը շահումների, վիճակահանված պարտատոմսերի և կուպոնների գումարի չափով և պահանջագրվում է № 34 հաշիվը փո-

խնայողության գումարի, № 126 հաշիվը տոկոսների և պահպանման վճարի գումարի չափով:

Յեկամտի մնացած գումարը կանխիկ վճարելու դեպքում պահանջագրվում է № 54 հաշիվը և փոխատվությունը հեռակայնորեն մարելու դեպքում—№ 83 հաշիվը: Վիճակահանված և շահած պարտատոմսերը դուրս են գրվում վորպես ծախս № 218 հաշվից և մուտք են գրվում № 210 հաշիվը:

յե) Փոխատվությունն ի հաշիվ գրավ դրված պարտատոմսերի մարելու դեպքում, նոր փոխառության պարտատոմսերի այն գումարը, վորով մարվում է փոխատվությունների պարտքը պարտագրվում է № 21 հաշիվը և պահանջագրվում է փոխատվության գումարի չափով № 34 հաշիվը և տոկոսների ու պահպանման վճարի գումարի չափով № 126 հաշիվը:

Փոխատվությունը մարելուց հետո, փոխատվությունն ստացողին հասանելիք 5 ռուբլուց պակաս մնացորդը կանխիկ վճարելու դեպքում, պահանջագրվում է № 54 հաշիվը կամ փոխատվությունը հեռակայնորեն մարելու դեպքում—№ 83 հաշիվը:

զ) Բաժնեգիրների կողմից չպահանջված—փոխանակված պարտատոմսերը, վորոնք գտնվում են № 219 հաշվում դուրս են գրվում այդ հաշվից, վորպես ծախս և գրանցվում են, վորպես մուտք № 224 հաշիվը:

է) Պարտատոմսատերերին փոստով ուղարկված նոր փոխառության պարտատոմսերը գրանցվում են № 231 «Զանազան արժեքներ ճանապարհին» հաշիվը և այդ հաշվից դուրս են գրվում վորպես ծախս, հետադարձ փոստային ստացականն ստանալուց հետո:

ը) Վերադիր վճարով ուղարկված պարտատոմսերի փոստային ծախսերի գումարը և ապահովագրական արժեքը պարտագրվում է № 85 և պահանջագրվում է № 54 հաշիվը: Այդ պարտատոմսերով պահպանման համար հասանելիք վճարը պարտագրվում է № 85 և պահանջագրվում է № 126 հաշիվը:

Վերադիր վճարի ստացված գումարը պահանջագրվում է № 85 հաշիվը—ծածկելով այսպիսով այդ հաշվի պարտքում պարտատոմսերն ուղարկելու ժամանակ գրած գումարը: Նշված գումարների հաշվառման համար, շրջ (քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը № 85 հաշվով պետք բացի առանձին անձնական հաշիվ:

4. Շրջ (քաղ) խնայդրամարկղի հաշվապահությունը—յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկությունում փոխանակումը վերջացնելուն զուգընթաց, սակայն վոչ ուշ. քան տվյալ հիմնարկ-ձեռնարկությունում փոխանակումը վերջացնելուց հինգ որ հետո, պարտավոր է պահանջել հիմնարկ-ձեռնարկության ադմինիստրացիայից պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ վերջնական հաշվետվություն (տես 1936 թվի ոգոստոսի 5-ի № 569 հրահանգի № 1 հավելվածը) և ստուգել յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության հետ, նրանց կողմից ներկայացված փոխանակման վերաբերյալ հաշվարկման ճշտությունը:

Յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկությունում փոխանակումը վերջացնելուց հետո. տվյալ հիմնարկ-ձեռնարկության պարտատոմսերի մնացորդն ըստ № 208 հաշվի, № 1 յենթահաշվի, ձև № 107—անձնական հաշվի—պետք հավասար լինի պարտատոմսերի այն գումարին, վորը տված է հիմնարկ-ձեռնարկությանը փոխառության կոլլեկտիվ բաժնեգրության վերաբերյալ հաշվարկումներ կատարելու համար:

№ 208 հաշիվը, № 1 յենթահաշիվը փակվում է «Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) հաշվառման և հաշվետվության» մասին հրահանգի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, միայն այն դեպքում, յերբ հիմնարկ-ձեռնարկությունը վերջացնում է բաժնեգիրների հետ կոլլեկտիվ բաժնեգրության հաշվարկումները, և այդ մասին ստացվում է սահմանված կարգով հաշվետվություն—բոլոր հիմնարկ-ձեռնարկություններից:

5. Փոխանակման վերաբերյալ հաշվապահական հաշվետվության ձևն ու ծավալը, նրա ներկայացման կարգն ու ժամկետը սահմանված է ԽՍՀՄ ՖԺԿ-ի 1936 թվի ոգոստոսի 5-ի № 569 հրահանգով, վորով պետք ղեկավարվեն շրջ (քաղ) խնայդրամարկղները և ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի Վարչությունները—փոխանակման վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելիս:

Պետաշխխնայդրամարկղների յեվ պետվարկի
գլխավոր վարչության պետ՝ ՈԶԵՐՅԱՆՍԿԻ

Գլխ. հաշվապահ՝ ԴՐՈՒՅԱ

ՇՐՋ(ՔԱՂ.)ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂ.

Հավելված № 1
Ձեվ № 107-բ

№ ________

________________ օրջանում

## ՀԱՇԻՎ № 208—ՑԵՆԹԱՀԱՇԻՎ № 2

«______» ______________ 193 թ.

# ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Շրջ(քաղ)խնայդրամարկղի—փոխանակումը գյուղում կատարող լիազորի

.................................................................................

(Պաշտոնը—ազգանունը, անունը և հայրանունը)

| Գրանցման ամսաթիվը | Անվանական արժեքով | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ցանկերի և քանակը հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերի | Ընդամենը տված են Ցերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսեր, փոխանակման սկզբից | | Վերադարձված են Ցերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսեր. | | Հանձնված են փոխանակման կետին պարտատոմսեր | Մնացորդը [illegible] |
| | | Անպայման շահող | Տոկոսաբեր | Անպայման շահող | Տոկոսաբեր | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

Փոխանակման հաշվարկումը ստուգված և վերջացրած է. Հաշիվը փակված է «______» ______________ 193 թ.

Շրջ (քաղ) խնայդրամարկղի գլխ. հաշվապահ՝ (ստորագրություն)

ՇՐՋԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂ

Հավելված № 2
Ձեվ № 165

№ ________

## ՄԱՏՅԱՆ ԸՍՏ № 224 ՀԱՇՎԻ, ՅԵՆԹԱՀԱՇԻՎ № 1

Նախորդ պետական ներքին փոխառությունների պարտատոմսերը հաշվառման յենթարկելու մասին, վորոնք ստացված են յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերի հետ կատարած փոխանակումից.

| Գրանցման ամսաթիվը | Գործառնական օրվա ամսաթիվը | Ընդունված են փոխառության պարտատոմսերը իրենց անվանական գումարով | | | | | | | | 10-րդ սյունյակում նշված պարտատոմսերը փոխանակված են | | | [illegible] | Արժեքի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Խորհրդային 3-րդ փոխառության | Հնգամյակի չորս տարում փոխառության | Հնգամյակի 3-րդ տարվա փոխառության | Հնգամյակի 4-րդ տարվա փոխառության | Ցերկրորդ հնգամյակի փոխառության (առաջին տարվա բաժին) | Ցերկրորդ հնգամյակի փոխառության (երկրորդ տարվա բաժին) | Ցերկրորդ հնգամյակի փոխառության (երրորդ տարվա բաժին) | Ընդամենը | [illegible] | [illegible] | [illegible] | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| | | | | | | | | | | | | | | |

-54
655
ՀՀ Ազգային գրադարան
NL0290333

24. 902